

ԲԺՇԿԱ-ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

ԴՈՒՄԱՆՅԱՆ Դ.Հ., ՍԱՀԱԿՅԱՆ Կ.Ռ., ՄԱՐԴԻՅԱՆ Մ.Ա., ԴՈՒՄԱՆՅԱՆ Գ.Դ.

Երևանի Ս. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի առողջապահության կառավարման և տնտեսագիտության ամբիոն, Երևան, Հայաստան

Հոդվածում քննարկվում է բժշկա-սոցիալական հետազոտությունների հնարավորությունները, բուժօգնության որակի գնահատման հարցում ինսամյալների կարծիքի ուսումնասիրման նշանակության հարցը: Այդպիսի մոտեցումը կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվություն է՝ բուժկանխարգելիչ հիմնարկների աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար: Բուժօգնության որակի գնահատման հարցում առավել նպատակահարմար է այն գնահատել եռակողմ. կառուցվածք, տեխնոլոգիա և արդյունք: Որպես սոցիալական նշանակություն ունեցող կոմպոնենտ, անհրաժեշտ է առանձնացնել մատչելիությունը:

Իրականացված բազմակի կորելացիոն վերլուծությունը հիմնավորել է, որ բուժօգնության որակի բավարարվածության ինտեգրալ ցուցանիշի և բուժօգնության մատչելիության համար ժամանակին մասնագիտացված կոնսուլտատիվ և բուժօգնություն ստանալու հնարավորությունն ունի հավաստի ազդեցություն վերջնական արդյունքի վրա: Այս փաստը հիմնավորում է բուժօգնության տնտեսական մատչելիության սահմանափակումների առկայությունը: Ընդհանուր առմամբ, պացիենտները բուժօգնության որակի բոլոր բաղադրիչները գնահատել են բարձր: Սակայն, առկա են որոշակի ռեզերվներ, որոնց վերացման համար անհրաժեշտ է հայտնաբերել այն պատճառները, որոնք բացասական են ազդում բուժօգնության որակի ապահովման համակարգի վրա: Ըստ սոցիոլոգիական հարցման տվյալների, պացիենտները հիմնականում նշել են գործոններ, որոնք ազդում են բուժօգնության մատչելիության վրա:

Այսպիսով, պացիենտների բուժօգնության որակի գնահատման համար կիրառված սոցիոլոգիական հարցման տվյալները հնարավորություն են տալիս վերլուծել ոչ միայն պացիենտների բժշկա-սոցիալական բնութագիրը, այլ նաև բուժօգնության որակի բոլոր բաղադրիչները, ինչպես առանձին, այնպես էլ միասին: Այսպիսի մոտեցումը խիստ անհրաժեշտ է կառավարման պրոցեսի իրականացման համար: Պացիենտների բավարարվածության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում ունենալ այն հիմնահարցերի վերաբերյալ, որոնք երբեմն թաքնված են մնում բուժաշխատողից, բայց առկա է բուժօգնության տարբեր մակարդակներում: Այն հնարավորություն կտա հայտնաբերել բուժկանխարգելիչ միջոցառումների կազմակերպման այսպես կոչված «թույլ կողմերը», ինչպես նաև, որոշել բուժօգնության կատարելագործման կոնկրետ ուղիները:

Քանի որ բուժօգնության որակի հսկողության համակարգի բազային սկզբունքները պետք է ուղղված լինեն դեպի պացիենտը, ապա, առողջապահական համակարգի տարբեր մակարդակներում, բժշկա-սոցիոլոգիական հետազոտությունները կարող են երաշխավորվել բուժօգնության որակի վերլուծության համար:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY